

Ուլյանա Ա. Կոստանյան

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԵՎ ՎԱՍԻԼԻ ՇՈՒԿՇԻՆԻ ԱՐՁԱԿԸ

Ժամանակի սոցիալ-քաղաքական կյանքի համատեքստում*

Բանալի բառեր – գյուղագրական արձակ, մարդկային հարաբերություններ, գլխավոր կերպար, գյուղական կյանք, հակադրություն, համատեքստ, գյուղաշխարհի, հերոս, գրաքննադատ:

1960-ական թվականների վերջն ու 1970-ականները խորհրդային գյուղական արձակի համար մի կողմից՝ նոր նվաճումների, այսպես կոչված՝ քաղաքացիության ամրագրման, մյուս կողմից՝ նաև յուրօրինակ փորձության տարիներ էին:

Հրատարակված նոր գրքերն ու մամուլում տպագրված ստեղծագործությունները՝ Վ. Շուկշինի «Այնտեղ՝ հեռվում» (1968), Ֆ. Աբրամովի «Երկու ձմեռ և երեք ամառ» (1968), «Ուղիներ-խաչուղիներ» (1973), Հ. Մաթևոսյանի «Երկրի ջիղը» («Աշնան արև», 1972), «Խումհար» (1969), Վ. Աստաֆևի «Արքա-ձուկը» (1972-1975), Վ. Ռասպուտինի «Վերջին հրաժեշտը» (1978), Ի. Դրուցեի «Մեր բարության բեռը» (1978) և այլն, գալիս էին վկայելու, որ, եթե փոխվել է ինչ-որ բան, ապա փոխվել է այնքանով, որ ավելի ու ավելի է արմատավորվել ու բյուրեղացել գեղագիտական, գաղափարական, թեմատիկ կայուն սկզբունքների ու հարցադրումների համակարգը: Երևույթի տարածական սահմանների ընդարձակումն ուղեկցվում էր բարձրացված նախկին հարցադրումների խորացմամբ և նորերի առաջադրմամբ, բարոյա հոգեբանական նպատակաուղղվածության հստակ ընդգծմամբ, ազգային ակունքներից իրենց հոգևոր ու բարոյական անսպառ ուժն առնող հերոսների կերպավորմամբ:

Գյուղական արձակը առանց դիմադրության չընդունվեց քննադատության կողմից: Ինչպես գրական յուրաքանչյուր նոր երևույթ, այն նույնպես ունեցավ իր համախոհներն ու հակառակորդները, նրա շուրջը ևս ծնվեցին հակասական և իրարամերժ կարծիքներ: Ռուս գրաքննադատության մեջ առաջիններից Ֆ. Կուզնեցովը ժամանակաշրջանի բազմատարր գրական

Ը (ԺԳ) փայտի, թիվ 2 (54) ամսիկ-հունիս, 2016

ՎՎՎ համահայկական հանդես

*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.06.2016:

ընթացքում նկատեց դեռևս նոր-նոր սաղմնավորվող երևույթը՝ որոշակիորեն բացահայտելով նրա ակունքներն ու կանխատեսելով զարգացման հեռանկարները: Անդրադառնալով ոչ այնքան հայտնի «Հյուսիս» ամսագրում 1966-ին Վապիլի Բելովի տպագրած «Սովորական գործ» վիպակին՝ քննադատն ընդգծեց «խսկական ժողովրդականության» և երիտասարդ արձակագրի գեղարվեստական կողմնորոշման անհերքելի կապը՝ հստակորեն սահմանազատելով գյուղաշխարհի արտացոլման իրական շարժառիթներն ու «ակունքների հովվերգական գովերգումը՝ բացառելով դրանց ընդհանրությունը»¹: Իրականությունը, իհարկե, չփոխեց գրողի հանդեպ հոռետեսությամբ տրամադրված գրաքննադատության վերաբերմունքը:

1970-ականների ավարտին, իրոք, այնպիսի տպավորություն կար, թե «հոգնել է քնարական գյուղական արձակը»²: Սակայն արդեն 1980-ականների սկզբին հրապարակի վրա էին Չ. Այթնատովի «Եվ դարից երկար ձգվում է օրը» (1980) վեպը և Հ. Մաթևոսյանի «Անձրևած ամպեր» (ռուսերեն թարգմանությամբ՝ «Տաշքենդ», 1982), «Տերը» (1980) վիպակները, որոնք գեղարվեստական նոր ուժով էին զարգացնում ժանրի բերած գլխավոր հիմնախնդիրները:

Երբեմն այն կարծիքն է հայտնվում, թե անհրաժեշտություն չկա գյուղագրական արձակը պաշտպանել մեղադրանքներից՝ չնայած խիստ ծայրահեղ առարկություններն ու հանդիմանությունները բացառված չեն նաև այսօր, որոնք շատ դեպքերում նախկին տեսակետների նոր դրսևորումներն են և միտում ունեն թերություններ հայտնաբերել այդ ժանրում: Իրականում կարճ ժամանակամիջոցում գյուղագրությունը ստեղծել է երկեր, առանց որոնց անհնար է պատկերացնել ժամանակակից գրականությունը: Դրանք կենսական մեծ տարողությամբ, համամարդկային մնայուն բացահայտումներով և խոշոր ընդհանրացումներով ստեղծագործություններ են, քսաներորդ դարի ռեալիստական արվեստի ուրույն դրսևորումներ:

Այս առումով՝ թե՛ Հ. Մաթևոսյանի, թե՛ Վ. Շուկշինի ստեղծագործական որոնումները, քննադատության կողմից շարունակելով բնութագրվել որպես «գյուղական արձակ», այնուամենայնիվ, նոր հարցադրումներ էին երևան բերում: Մասնավորապես՝ Վ. Շուկշինի ստեղծագործության մեջ ժամանակի ընթացքում առավել մեծ չափով սկսեց դրսևորվել ընդվզումը կյանքին հարմարվող ամբոխավարների ու բյուրոկրատների դեմ («Այնտեղ՝ հեռվում» (1968), «Տալիս ես սիրտ» (1967), «Զրույցներ պայծառ լույսի տակ» (1972) ժողովածուներ, «Զրո, գրո ամբողջ» (1971) և այլ պատմվածքներ): Արձակագրի գրական գործերում և ֆիլմերում սկսեցին գերիշխել դեպքերի, իրադարձությունների ու մարդկային արարքների հոգեբանական վերլուծությունը, հետաքրքրությունը ժողովրդական կյանքի ներկայացուցիչների, մարդկային հոգևոր արժեքների նկատմամբ («Լյուբավիչներ» վեպը (1965), «Ձեր որդին և եղբայրը» (1965), «Տարօրինակ մարդիկ» (1969), «Բնավորություններ» (1973) պատմվածքները և այլ ստեղծագործություններ):

Հ. Մաթևոսյանն իր հերթին շարունակում էր ընդարձակել կերպարների ընդհանրացման սահմանները, ներառել նորանոր հոգեբանական և

1 Кузнецов Ф., Движение вглубь, "Литературная газета", 1966, 22 ноября.

2 Бочаров А., Эпос, миф, притча, "Литературное образование", 1980, N 1, с. 36.

գաղափարական հարստություններ՝ ավելի ու ավելի հեռանալով սոսկ իբրև գյուղացի կամ գյուղաբնակ ընկալվելու և մեկնաբանվելու «վտանգից»: Նրա ստեղծագործություններում արտացոլվում է հայ գյուղը, գյուղացին, որն իր խնդիրների պատճառով հարկադրված է թողնել հայրենի հողը, հայրական օջախն ու հեռանալ քաղաք: Հայ գյուղն արձակագրի աչքի առաջ սկսեց փլուզվել, կամաց-կամաց տեղի էր տալիս համայնական կյանքի հավերժական թվացող մի կացութաձև: Այստեղից են բխում հայ գյուղի գեղարվեստական տարեգրի անհանգստությունն ու տագնապը:

Կան գյուղը, գյուղացին, սակայն երկուսն էլ անհասկանալիորեն փոխվել են: Ո՞րն է պատճառը: Որո՞նք են «ավանդական» քաղաքակրթությունների փլուզման և կործանման պատճառները. ահա այն միջնասյունը, որի շուրջ գյուղի տարեգրությունն են ստեղծում Հ. Մաթևոսյանը և Վ. Շուկշինը: Նրանց ստեղծագործությունները հայտնաբերում են առողջ հոգու ու վեհ երագների մի թախծոտ աշխարհ, որը լի է մարդկային բազմագույն և բազմաձև հոգեվիճակների դրսևորումներով, կյանքի պարզ ու բարդ կուտակումներով: Ծմակուտյան աշխարհն իսկական գրողի երևակայության պրիզմայում բեկորված, բյուրեղացած աշխարհն է, որի պատուհանից էլ նա գյուղը դիտում և արժևորում է կենդանի կյանքը, մարդուն և իրականությունը: Շուկշինի ստեղծած գեղարվեստական տարածությունը, իհարկե, հատուկ անուն չունեցավ, բայց նրա արձակում էլ բյուրեղացած տեղանք է առկա, որ ծառայում է իբրև մեծ աշխարհին նայելու պատուհան:

Թե՛ Հ. Մաթևոսյանը, թե՛ Վ. Շուկշինը իրենց գեղագիտական իդեալն արարելիս դիմում են ժողովրդի ազգային-մշակութային ավանդներին՝ ունենալով ելակետային մի սկզբունք՝ մարդու և մարդկայինի խնդիրը լուծել անհատի բարոյահոգեբանությամբ: Այս նկատառումով էլ մաթևոսյանական ու շուկշինյան ստեղծագործությունների բուն աղերսները գնում, առնչվում են ռուս և համաշխարհային գեղարվեստական մտածողությանը:

Հ. Մաթևոսյանն առօրյա գյուղական կոլորիտի մեջ փնտրում է վեհացող ու վեհ մարդու կերպարը: Նա նախընտրում է ուժեղ կրքեր և բախումներ, ինչպիսիք, օրինակ, «բեռնածիերի» (նույնանուն շարքի) կերպարներն են (Գիքորը, Ալխոն), որոնց սովորական թվացող առօրյայում գրողը հայտնաբերում է մարդու բարոյական հիմքերին, անհատի հոգևոր կարողություններին, կեցության բնական նախահիմքերին հասնելու ձգտումը, մաքառումը: Ծանրակշիռ, ուժեղ կրքերի ու բախումների շարք է «Բեռնածիեր» (1967) պատմվածաշարը և ընդհանրապես «Օգոստոս» ժողովածուն: «Ալխո»-ն (1965), ինչպես նաև «Կանաչ դաշտը» (1978), «Գոմեշը» (1968) պատմվածքների կերպարները ոչ թե «մարդկայնացված» կենդանիներ են, այլ կենդանակերպ մարդիկ, որոնց ուսերին ծննդյան իսկ օրվանից ծանրացել են կյանքի բեռներն ու հոգսերը, անվերջանալի տառապանքները: Նույն այս շարքի կերպարներ են Ալխոն, Մարիամը, Գիքորը, Մեսրոպը, Սանասարը և այլք:

Վ. Շուկշինն իր պատմվածքներում գյուղացի-քաղաքացի հակադրության համատեքստում անդրադառնում է գյուղում ապրող մարդկանց կյանքին: Նրանք մեծ դժվարություններ են հաղթահարում, ի վերջո նրանցից շատերը նաև դժվարությամբ են ապրուստ վաստակում գոյությունը պահպանելու համար: Գյուղացին հետ է մնացել կյանքի բնականոն զար-

գացման ընթացքից: Քաղաքում ամեն փայլող ու նոր բան նրան ապշեցնում է: Օրինակ՝ «Կոշիկները» պատմվածքում պատկերվում է կենցաղային մի սովորական դրվագ գյուղական վարորդ Սերգեյ Դուխանինի կյանքից: Վերջինս գյուղից քաղաք է եկել՝ պահեստամասեր գնելու: Խանութում կանացի երկարաձիտ կոշիկներ է տեսնում՝ վաթսուսինից ռուբլի արժողությամբ: Որքան լավ կլիներ, եթե կինն այդպիսի կոշիկներ հագներ: Կինը, նման նվեր ստանալով, ուրախությունից կփայլեր: Ահա կյանքի սովորական այս դրվագն է ընկած պատմվածքի բարոյահոգեբանության հիմքում, որի միջոցով էլ Վ. Շուկշինն արծարծում է մարդկային կյանքի, ինչպես նաև մարդկային հարաբերությունների իմաստի և արժեքի հարցը:

Պատմվածքը հոգեբանական է, քանի որ գրողը հիմնական ուշադրությունը դարձնում է ոչ թե գլխավոր կերպարի գործողություններին ու արարքներին, այլ ապրումներին և խոհերին: Հեղինակը չի տալիս Դուխանինի կյանքի նկարագիրը, չի շարադրում նրա կենսագրությունը, ինչը բնորոշ է նաև Հ. Մաթևոսյանի պատումներին: Գրողը ցույց է տալիս, որ Սերգեյի քայլը շատ գեղեցիկ է, որովհետև երբեմն շատ քիչ բան է պետք մարդուն: Թեկուզ մի ակնթարթ երջանկացնելու համար: Կինն արդեն կարող էր համագյուղացի կանանց մոտ պարծենալ: Երկարաձիտ կոշիկներ գնելը դառնում է ամուսինների սիրո հաստատման գրավականը:

Վ. Շուկշինի մեկ այլ՝ «Վանյա, էս որ քամին քեզ բերեց» պատմվածքի կերպարը՝ Պրոնկա Լագուտինը, ամիսը մեկ անգամ քաղաք է գնում՝ այնտեղ կրթություն ստացող քրոջը տեսնելու և նրան ուտելիք տանելու համար: Այցելություններից մեկի ժամանակ փողոցում նրան է մոտենում մի երիտասարդ ու գեղեցիկ կին և առաջարկում ինչ-որ ֆիլմում հասարակ գյուղացի տղայի դեր խաղալ: Ֆիլմում նկարահանվելու համար մի շաբաթ էլ պիտի մնար քաղաքում: Այդ մտքի հետ նա չի կարող համակերպվել. մտածում է իրեն սպասող մոր մասին և հեռանում է՝ ռեժիսորի սեղանին գրություն թողնելով:

Պրոնկայի կյանքում տեղի ունեցած փոքրիկ դրվագն արտահայտում է իրականությունը, արտացոլում է գյուղի և քաղաքի կյանքի տարբերությունները: Գյուղում մեծացած ու իր կյանքն այնտեղ անցկացրած մարդու համար այդ վայրից սրբազան ու կարևոր արժեք ունեցող տեղ չկա: Բացի այդ՝ հարստությունն ու փառքն անցողիկ են, դրանց արժեքը հարատև չէ: Նյութական արժեքները մոխիր են դառնում, իսկ հոգևոր արժեքները մշտապես ապրում են, ուստի անդինադրելի ազահությունը մարդուն միայն կործանման կարող է տանել, ինչն իր վարքագծով ապացուցում է նաև Հ. Մաթևոսյանի աղվես Գիքորը («Օգոստոս»):

Մարդու և հողի ահա այստեսակ խաթարվող բարեկամության ու դրանից բխող հետևանքների կանխատեսումն էլ գրողի խոսքին հաղորդում է զայրույթ և ցավ, որը ոմանք ընդունեցին իբրև պատերազմ քաղաքի ու քաղաքակրթության դեմ: Մարդու և հողի միջև սերնդից սերունդ բարեկամության խաթարումն ականա ձեղքվածք է առաջացնում նաև աշխատանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի, մարդկային առաքինությունների, ավանդույթների մեջ, ընդհանրապես բարոյական սկզբունքներում:

Հ. Մաթևոսյանին և Վ. Շուկշինին հետաքրքրում են ժողովրդի փիլիսոփայական ու բարոյական արժեքների կորուստները, գյուղի սոցիալական

վիճակի վերլուծությունը, ժողովրդագրական պրոցեսները և մարդկային, ընտանեկան հարաբերությունները: Նրանք գյուղաշխարհի հարազատ որդիներն են, արտահայտում են գյուղի հառաչանքը, նաև գյուղական նոր օջախների ստեղծման երազանքը, բացահայտում գյուղի ներքին բովանդակությունը, գյուղի և գյուղացու դրաման:

Ընդհանրապես խորհրդային գյուղագրական արձակը ներկայացնում է 20-րդ դարում ապրող գյուղացու կյանքի պատկերը՝ արտացոլելով նրա կյանքում տեղի ունեցող գլխավոր իրադարձությունները՝ Հոկտեմբերյան հեղաշրջումը, քաղաքացիական և Հայրենական պատերազմները, գյուղացիական տնտեսության վերափոխումը և այլն: Մա գեղարվեստական գրականության այն կարևոր բաղկացուցիչն է, որը տալիս է ազգային կյանքի բնութագիրը, ստեղծում հասարակ, պարզ կյանքով ապրող մարդկանց կերպարներ: Դրանք և շուկչինյան խենթ կերպարներն են, և ռասպուտինյան իմաստուն ծերունիները և այլք: Ինչպես իրավացիորեն նշում է Լ. Երշովը. «Հանձին Շուկչինի՝ հանդիպում ենք այնպիսի վառ անհատականության դրսևորման, երբ մեկ մարդու կերպարում, ընդ որում՝ շատ ինքնատիպ ու ներդաշնակ ձևով, ամփոփվում են նշանավոր արձակագրի, ռեժիսորի ու դրամատուրգի տաղանդները»³:

Ռուս գրողի արձակը հյութեղ է, բովանդակալից ու կենսալից: Պատվածքներում պատկերվող գործողությունների վայրը հիմնականում գյուղն է՝ փոքր հայրենիքը (սույնը նաև Հ. Մաթևոսյանի արձակում), բայց ստեղծագործություններում տեղի ունեցող իրադարձությունները չեն սահմանափակվում միայն գյուղական միջավայրի շրջանակներում: Բացի այդ՝ նրանցում դեպքերը երբեմն կատարվում են անսպասելիորեն. սկիզբն ու վերջը չեն կանխորոշվում: Մանրի ու մեծի, կարևորի և երկրորդականի զանազանում չկա. բոլոր իրողությունները քննվում են զննող հայացքի, միևնույն լարված ուշադրության, հավասար լույսի տակ: Ստվերներն անլյուններում չեն խտանում, մարդիկ խոսում են այնպես, ինչպես կխոսեին փողոցում, ժողովի ժամանակ, կալանավայրում և այլուր: Այդ մարդկանցից զատ նրանց կողքին մեկն էլ զարմանք է ապրում բնությանը, երգով:

1968 թ. լույս տեսած «Հազար ներողություն, տիկին» ստեղծագործության կերպարը Բրոնիսլավ (Բրոնկա) Պուպկովն է: Վ. Շուկչինի ոճին շատ բնորոշ է կերպարի դիմապատկերի ընդգծումը: Նշված հնարքը հնարավորություն է տալիս ոչ միայն ներկայացնել գլխավոր հերոսին, այլև որոշակիորեն արտահայտել հեղինակի ընդգծված վերաբերմունքը և մեղմ հուսորը. «Բրոնկա (Բրոնիսլավ) Պուպկովը դեռևս ուժեղ, բարեկազմ տղամարդ է, կապտաչյա, ժպտերես, ոտից թեթև, լեզվից էլ: Հիսունն անց է, ռազմաճակատում եղել է, բայց խեղանդամված աջ ձեռքը՝ երկու մատը պոկված տարած է, կովից չէ. դեռևս պատանի, որսատեղում, ուզեցել է ջուր խմել (ձմռանը), սկսել է խզակոթով սառույցը ջարդել: Հրացանի փողից է բռնած եղել, երկու մատը դրած փողին: Բերդանի փակաղակը՝ բերդանի վրա է իջել, և մի մատը մի կողմ է թռել, մյուսը կախվել ձեռքից»⁴:

Շատ գրաքննադատներ կարծում են, որ Վ. Շուկչինի արձակի հերոսը խենթ ու տարօրինակ անհատն է, որը բացահայտվում է տարբեր ձևերով,

3 Ершов Л., Муромский В., Русская советская литературная критика (1956–1983), М., 1984, с. 157.

4 Շուկչին Վ., Պատմվածքներ, Եր., 1979, էջ 275:

այսինքն՝ կա մի կերպար, որ դիտարկվում է տարբեր տեսանկյուններից: Սակայն իրականում այդպես չէ: Ընդհանուր հատկանիշներով օժտված կերպարները նույնաբնույթ չեն: Վ. Շուկշինի ստեղծած «խենթուկները միանգամայն տարբեր են: Այսինքն՝ գրողը անհատի բնորոշման, նրա կյանքի արտացոլման նոր հնարավորություններ ու եղանակներ առաջ քաշեց»⁵:

Արձակագիրն իր ստեղծագործությունների կերպար դարձրեց հասարակ մարդուն: Նրա նախընտրած գլխավոր կերպարները գյուղացիներն են, բայց դա չի նշանակում, որ այդ երկերը սահմանափակվում է միայն գյուղական կյանքի նկարագրությամբ: Պատմվածքներում հաճախ են արտացոլվում քաղաքային ու գյուղական կյանքի հակադրությունը կամ գյուղ-քաղաք հակամարտությունը: Ընդ որում՝ գրողի հերոսները հիմնականում խենթ և տարօրինակ կերպարներ են, որոնք կարող են անկանխատեսելի արարքներ գործել: Ճշմարտությունը խենթ ու տարօրինակ մարդկանց շուրթերով հնչեցնելը հեղինակի «փոքրիկ խորամանկությունն» է, եթե նկատի ունենք ժամանակի գրական մամլիչը: Այդ կերպարները զուրկ չեն դրական հատկանիշներից: Հաճախ գրողի կողմից տրված դրական մեկ կամ երկու հատկանիշը բավական են՝ բացասականները ժխտելու: Մարդն ապրում է և ունի իր գաղափարներն ու պատկերացումները կյանքում տեղի ունեցող երևույթների մասին:

Հ. Մաթևոսյանի և Վ. Շուկշինի պատմվածքների կերպարների շարքում առանձնանում են դրական հատկանիշներ ունեցողները: Նրանք իրենց ամբողջ կյանքում պայքարում են բարու և ճշմարտության հաստատման համար, մարդկային բարձր արժեքների կրողներ են՝ չնայած զերծ չեն որոշակի տարօրինակություններից: Այդ հերոսները ճշմարտության հաստատման համար պատրաստ են գնալ ցանկացած քայլի:

Հեղինակային մտահղացումների շարադրման, ինչպես նաև կերպարների կերտման առումով Հ. Մաթևոսյանը չափազանց ինքնատիպ գրելաձև, գրական և գեղարվեստական հնարքներ է գործադրում: Հիրավի, «Մենք ենք, մեր սարերը» (1962), «Գոմեշը», «Մեսրոպ» (1967), «Մեծամոր» (1969), «Սկիզբը» (1974), «Ծառերը», «Տերը» և այլ վիպակներ հայ արձակում (և ոչ միայն հայ) գրական նորույթներ, հայտնագործումներ են ոչ միայն հրատապ նշանակություն ունեցող թեմատիկ արժարժումների, այլև մարդկային բնավորությունների ինքնօրինակ ներկայացմամբ:

Մաթևոսյանական կերպարները (Աղունը, Ռոստոմը, Գոմեշը, Ալխոն, Գայլը, Ծառը և այլք) հեղինակի աներկմիտ ու շիտակ բարոյաբանության, կյանքի նկատմամբ նրա դրսևորած անհաշվենկատ և համարձակ հայացքի կրողներն են: Եվ կտրված չլինելով նախապապերի ավանդներից՝ այդ կերպարները նորն ինքնաբերաբար թմբկահարողներ չեն. նրանք հակադրվում են ժամանակի պարտադրանքին՝ փորձելով պահպանել իրենց անհատականությունը և դիմակայել մարդկային հարաբերությունները խաթարող անշրջելի ընթացքին, միաժամանակ՝ իրենց մեջ կրելով թումանյանական ու բակունցյան գյուղաշխարհի բազմաչարչար հայորդու թախիծն ու դժգոհությունը:

Արձակագիրների պատմվածքների թեմաները բազմաբնույթ են՝ սեր, հայրենասիրություն, անձնական որոշ մղումներով պայմանավորված

⁵ Горн В., Василий Шукшин. Личность книги, Б., 1990, с. 46.

արարքներ, գյուղացու դժվարին կյանքի նկարագրություն, կյանքի ու մահվան կենսափիլիսոփայություն, մարդկային հարաբերություններ, կորստի անդառնալի ցավ, նախանձ, քինախնդրություն և այլն: Բոլոր թեմաներին անդրադարձը կատարվում է գյուղական միջավայրում, սակայն պատմվածքների կերպարների շարքում կան նաև քաղաքաբնակներ:

Ռուս գրականության մեջ Վ. Շուկշինն արծարծում է հասարակությանը վերաբերող տարբեր խնդիրներ ու հարցեր՝ հանդես գալով մարդու իրավունքները պաշտպանողի դերում: Հասարակ ձևի մեջ, ոչ ծավալուն պատմվածքի շրջանակներում, հաճախ հումորով և երգիծանքով, ընթերցողի առաջ բացում է մարդկային կյանքի տարբեր հարցեր, հասարակական խնդիրներ և այլն: «Վ. Շուկշինը ճանաչում է ժամանակակից մարդուն և՛ որպես կինոռեժիսոր, և՛ որպես կինոդերասան, և՛ օգտագործում էր կինոյի արվեստը՝ որպես արձակագիր: Ես մտածում եմ, որ հենց սրանով է բացատրվում նրա արձակի հակիրճությունը, դրամատիզմը, հասանելիությունը հասարակության լայն շերտերին: Վ. Շուկշինը հիանալի գիտեր՝ ինչ էին սպասում իրենից և ինչի կարիքն ամենաշատն ունեին իր ժամանակակիցները»⁶, - գրում է քննադատ Բ. Բուրսովը:

Վ. Շուկշինին՝ որպես տաղանդավոր գրողի, հաջողվել է ոչ միայն ներկայացնել տարբեր մարդկանց կենսակերպը, այլև բացահայտել ազնիվ ու առաքինի մարդու նկարագիրը: Իսկապես, գրողի արձակը ռուսական ոգու կենսափիլիսոփայության առումով մեծ դեր ունի. կարող է մարդկանց հեռու պահել սխալներ թույլ տալուց, ինչպես որ Մաթևոսյանի արձակը, որն իր հերթին հայ ոգու կենսափիլիսոփայության արտահայտությունն է: Նրանց ստեղծագործություններում առանձնացված թեմատիկան հանդես է գալիս ինքնատիպ կառուցվածքով: Խոսքը վերաբերում է նաև կերպարային համակարգին: Յուրաքանչյուր պատմվածքի որոշակի հատված բովանդակում է տվյալ ստեղծագործության կերպարի արտաքին ու ներքին նկարագիրը, ինչպես նաև մեղմ հումորը: Այս հնարքն առավել նպատակաուղղված ձևով տալիս է կերպարի բնութագիրը՝ միաժամանակ արտահայտելով հեղինակային վերաբերմունք: Ուշագրավ է, որ ամբողջ ստեղծագործության շրջանակներում բացասական գծերով ու տարօրինակ վարվելակերպով օժտված անհատը զուրկ չէ նաև դրական հատկանիշներից:

Հ. Մաթևոսյանի անհատականության, նրա քաղաքացիական նկարագրի և հոգևոր աշխարհի գեղեցիկ հայտնություններն են «Սկիզբը», «Աշնան արև» և «Տերը» վիպակները: Այս ստեղծագործությունների կերպարները կյանքի մատուցած կնճռոտ հարցերի պատրաստի պատասխանները չունեն: Նրանք գլուխ են կոտրում, տանջալիորեն քննում են աշխարհի բանը՝ մեծ ճշմարտությանը հասնելու նպատակով: Այդպիսի կերպար է Աղունը՝ արձակագրի ստեղծած առավել ամբողջական ու կենդանի բնավորություններից մեկը: Նմանատիպ կերպար է նաև Վ. Շուկշինի Կլավդիան «Կոշիկները» պատմվածքում, ինչպես նաև Գրիսկա Մալյուգինը՝ նույնանուն պատմվածքում և այլն:

Գեղարվեստական ճշմարտության բացահայտումն անհնարին է առանց գրական կերպարի հոգեկերտվածքի և բարոյական նկարագրի, նրա ձգտումների ու փնտրտուքների, մտորումների և ապրումների, կյանքի

6 Бурсов Б., Критика как литература, Л., 1976, с. 165-170.

ինաստավորման ու գնահատման սկզբունքների համակցության: Հ.Մաթևոսյանի և Վ. Շուկշինի կերպարները կյանքի նկատմամբ ունեցած գիտակցական վերաբերմունքով և պատկերացումներով նկատելիորեն տարբերվում են, որովհետև նրանց գործունեության դրդապատճառներն ունեն ավարտուն տեսք և նպատակային հեռանկար: Նրանք իրենց կենսական ու հոգեբանական տարբեր կուտակումներում կրում են կյանքի և իրականության ռեալ պատկերը, խորապես գիտակցում են իրենց գործունեության նշանակությունը:

Ուլյանա Ա. Կոստանյան – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են հայ-ռուսական գրական ու մշակութային կապերը: Հեղինակ է Հ. Մաթևոսյանի և Վ. Շուկշինի գրական առնչություններին վերաբերվող մի շարք հոդվածների:

Summary

THE PROSE OF H. MATEVOSIAN AND V. SHUKSHIN In the context of socio-political life of the time

Ulyana A. Kostanyan

Key words – village prose, human relations, main character, rural life, contrast, context, rural world, hero, literary critic.

The article considers the matter of two writers' depiction of the socio-political problems of their time, becoming the eternal issues of history and existence. In paralel with the eternal problems they also depict numerous social problems of the village, discuss the difficult life of villagers earning money heavily and overcoming great difficulties.

Резюме

ПРОЗА Г. МАТЕВОСЯНА И В. ШУКШИНА

В контексте социально-политической жизни их времени

Ульяна А. Костанян

Ключевые слова – деревенская проза, человеческие отношения, главный герой, сельская жизнь, контраст, контекст, сельский мир, герой, литературный критик.

В статье речь идет об отражении в произведениях Г. Матевосяна и В. Шукшина социально-политических проблем своего времени, которые обретают значение извечных вопросов истории и бытия. Наряду с этими вопросами в них затрагиваются социальные проблемы села, показывается тяжкая жизнь его жителей, преодолевающих большие трудности, с упорством и настойчивостью зарабатывающих на хлеб насущный.